



48. ՍԸՌԻ ԶՊԱՀՈՂ ԿՆԻԿ

Կըլնի, շիւնի մի մարդ, մի կնիկ: Էս կնիկը աստու իրան օրը մարդի յախեն էր կպնում:

— Ա՛յ մարդ,— ասում էր,— դու խի՞ չես ինձ սըռ ասում, հենց ինչ ըլնում ա ինձանից պահում ես. հալրա՛թ վախում ես՝ էթամ սրան, նրան ասեմ:

— Հենց ըտենց ա, ա՛յ կնիկ,— ասում ա մարդը,— քեզանից պահեմ, ասա՞նից ինչ պահեմ: Կնկա տամարը մի քիչ բոշ ա. քեր-նի՛ն շիւ շի քըզլի. դժարն էն ա մի բան ասես՝ կէթա, սա՛ղ աշխար-քը չա՛վ կանի:

— Զէ՛, ա՛յ մարդ, ես հո չեմ գժվե՛ մեր սըռն էթամ խալխին ասեմ: Ուզում ես, փորձի հմար մի հետ ասա՛, տե՛ս ո՛նց սըռ պահող եմ. թեկուզ հերս էլ պատանն ուսին գա, չեմ ասի:

— Բաս որ ըտենց ա, ա՛յ կնիկ, ըստուց ետը՝ կասեմ, տենանք ո՛նց կպահես:

Էդ գշերը քնելիս, մարդն էթում ա թաքուն մի ձու բերում, դնում ծոցը: Առավոտը վեր ա կենում, կնկանը կանչում.— Ա՛յ կնիկ, ա՛յ կնիկ:

— Ի՞նչ ա, ա՛յ մարդ:

— Բա չես ասի՞ Էս գշեր ես մի ձու եմ ածե:

— Զէ՛, դու է՛լ. մարդն էլ ձո՛ւ կածի:

¹ Տպագիր տեքստում՝ օրես դեճը, ուղղումը բանահավաքինն է (Մ. Կ.):

— Չես ավատում, հրես ա՛ռ տե՛ս. համա չըլնեմ-չիմանամ, էթաս մեր հարեաններին ասես, հա՛:

— Ձէ՛, ա՛յ մարդ, ո՛նց կասեմ. հո չե՛մ գփվեմ:

— Լա՛վ, տենանք՝ ոնց խոսքիդ տեր կըլնես:

Ձուն վեր ա ունում տալիս կնկանը: Նա էլ միամիտ՝ ավատում ա, ձուն առնում, պահում:

Մարդը վեր ա կենում էթում բազար, իրա բանին: Կնի՛կ դու կնիկ, էլ մաշալ մի տա: Էն սհաթը ձուն վե կալ տար հարեաններին շանց տու:

— Ա՛յ խիզան,— ասում ա,— բա չե՞ք ասի, մարդս էս գշեր մի ձու ա ածեմ:

— Տո դե չէ՛. դու էլ ընենց սուտ ես ասում, որ «էշն ախոռումը կղռա»,— դնամիշ են անում հարեանները:

— Չեք ավատում՝ հրե՛ս, տեհե՛ք:— Հանում ա շանց տալի:

— Էս հո հա՛վի ձու ա,— ասում են:

— Ձէ՛, ի՛նչ հավ, ի՛նչ դադ. առավոտը մարդս իրա ծոցիցը հանեց, դուք ասում եք՝ Ֆլա՛ն շի, բեհման ա:

Սա հա՛ ա ասում, նրանք՝ չէ՛, սա հա՛ ա ասում, նրանք՝ չէ՛, մախլա՛ս՝ էնքամ անում ա, որ ավատացնում ա խեղճերին:

Իրիկունը մարդը բազարիցը տուն ա գալի, տենում՝ իրենց հարեանի դռանը կնանիքը կիտվե դրից են անում: Դու հմի արի տես՝ ի՛նչ են խոսում:

— Ա՛ղջի, բա չե՞ս ասի, էս մարդը էրեկ գշեր մի ձու ա ածեմ.— Ըսենց իրար ասում ին, մատով նրան շանց տալի:

Մարդն էլ անկաջը կախ արած ըստոնք քոմմա լսում ա: Թողում ա գալի տուն, քաշում ա կնկանը՝ տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս՝ չոքացնում, կաննացնում, մի՛ն, է՛րկու, տա՛սը, մախլաս, մի լա՛վ, ձեր հավան կացած, գորսում ա:

— Տեհա՛ր,— ասում ա,— ա՛յ կնիկ, ասսու իրան օրը լախես իր կպնում, թե. «Սըռ չես ասում, սըռ, չես ասում»: Հրենիկ՝ ասեցի. բա խի՞ էն սհաթը փեշումդ կոլուեցիր, տարար քուչեն: Բալի էդ չէր՝ մի ուրիշ թաքուն բան ի ասում, պտի էթալիր սաղ գեղը չա՛վ աների:

Սրանից դենը մարդը թորա¹ արեց, որ ասես, կնկանն էլ սըռ չէր ասում:

¹ Տպագիր տեքստում՝ բորալամա, ուղղումը բանահավաքինն է (Մ. Կ.):